

Տեղեկատվություն իրավաբանական անձանց դիմումի ձև 1-1-ի 3-6 կետերի մասին

Կետ 3՝

Սոցիալական պաշտպանության ոլորտը «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի գործունեության հիմնական ռազմավարական ոլորտներից մեկն է: 2003 թվականից ի վեր «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն Հայաստանում իրականացրել է սոցիալական աջակցության ծրագրեր, որոնք հատկապես ուղղված են խոցելի բնակչության կարիքները հոգալուն և Հայաստան կամավոր վերադարձող միգրանտների վերաինտեգրմանը՝ աշխատանքի, սոցիալական աջակցության և բիզնես դրամաշնորհների միջոցով:

2020 թվականի պատերազմի առաջին օրերից մինչ այսօր «Մարդը կարիքի մեջ» կազմակերպությունը պատերազմի հետևանքով տեղահանված քաղաքացիներին, ինչպես նաև տուժած տեղի բնակչությանը ցուցաբերում է մարդասիրական մեծ աջակցություն՝ հիգիենայի պարագաների, էլեկտրաէներգիայի վճարների, տարատեսակ այլ օգնության միջոցով: Այն նաև զբաղվում է տեղահանված անձանց ինտեգրմամբ՝ համապատասխան կարողությունների զարգացման և աշխատանքի տեղավորման միջոցով:

Կազմակերպության կողմից իրականացվող ներկայիս սոցիալական աջակցության ծրագրերն են՝

1. [Աջակցություն կամավոր վերադարձող միգրանտների վերաինտեգրմանը՝ աշխատանքի, սոցիալական աջակցության և բիզնես դրամաշնորհի միջոցով:](#)
2. [Աջակցություն Մեծամորում բնակվող տեղահանված քնտանիքներին:](#)
3. [REACT: Հակամարտությունից տուժած անձանց հումանիտար աջակցության և ինտեգրման ծրագիր:](#)

Սոցիալական ոլորտում իրականացված նախկին ծրագրերին կարող էք ծանոթանալ «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի [պաշտոնական կայքում:](#)

Կետ 4՝

Ոլորտին վերաբերող բոլոր հրապարակումները հասանելի են «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության [պաշտոնական կայքում](#) և սոցիալական էջերում՝ [Facebook](#), [Instagram](#), [Twitter](#) և [YouTube](#).

Կետ 5՝

«Մարդը կարիքի մեջ»ՀԿ-ն հիմնականում աշխատում է հետևյալ դոնոր կազմակերպությունների հետ՝ Եվրոպական միություն, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն, ՀՀ-ում Բրիտանական դեսպանություն, ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանություն, ՀՀ-ում Չեխիայի դեսպանություն և այլն: Նշված միջազգային կազմակերպությունների հետ պայմանագրերը առկա են, կարող են տրամադրվել ըստ անհրաժեշտության:

Կետ 6՝

«Մարդը կարիքի մեջ ՀԿ»-ն բազմիցս մասնակցել է տարբեր նախարարությունների կողմից կազմակերպված աշխատանքային խմբերին, ինչպես նաև ՄԱԿ-ի կողմից կազմակերպվող աշխատանքային խմբերին, որը իրականացվում է համապատասխան նախարարությունների հետ համագործակցությամբ: 2020թ. պատերազմից հետո միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքային առաջին խմբերի կոորդինացումը սկսվել է հենց «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության նախաձեռնությամբ: